


Ուսանողական գիտական ընկերություն


2018 թ. ՎՊՀ ուսանողական գիտական ընկերությունը համագործակցել է հանրապետության 10 բուհերի հետ՝ մասնակցելով և մասնակցության հրավիրելով ուսանողական գիտական նստաշրջանների:

2018 թ. նոյեմբերի 6-ին ուսանողական գիտական նստաշրջան հրավիրել է նաև ՎՊՀ-ի ՈԻԳԸ-ն, որին մասնակցել են հանրապետության 8 բուհերի ուսանողներ:




Ստանալով ուսանողական գիտական նստաշրջանների 6 հրավեր՝ ուսանողները մասնակցել են բոլորին.

ՎՊՀ ուսանողների մասնակցությունը հանրապետական ուսանողական գիտաժողովներին



ՎՊՀ Ուսանողների մասնակցությունը ուսանողական գիտաժողովներին՝ ըստ ամբիոնների՝



Ընդհանուր առմամբ ՎՊՀ-ի ուսանողների կողմից կարդացվել է 112 գիտական զեկուցում, որոնք բարձր գնահատականների են արժանացել բուհերի ամբիոնների կողմից, զեկույցների հեղինակներից ոմանք ստացել են մրցանակներ և պատվոգրեր:

2018թ. կազմակերպված գիտաժողովների ժամանակ ներկայացրած հոդվածները դեռևս գրախոսման փուլում են: 2018թ. ՎՊՀ 6 ուսանողների աշխատանքներ տպագրվել են Արցախի պետական համալսարանի «Գիտական ընթերցումներ» հոդվածների ժողովածուում: Նշենք, որ ժողովածուն ներառել է նույն թվականի հանրապետական գիտաժողովի զեկուցումները, իսկ գիտաժողովին ՎՊՀ-ն ունեցել է 19 մասնակից (13 մասնակիցներ չեն ուղարկել իրանց աշխատանքները):

ՎՊՀ Ուսանողական գիտաժողովի նյութեր

2018թ. «ՎՊՀ Ուսանողական գիտաժողովի նյութեր» ժողովածուի տպագրման համար ստացվել է 87 հոդված:

25 հոդված չի համապատասխանել ընդունված չափորոշիչներին: Հոդվածների հեղինակներին տրվել է հնարավորություն շտկելու թերությունները, որից հետո դարձյալ հոդվածները չեն համապատասխանել ընդունված չափորոշիչներին և չեն ներկայացվել գրախոսման: Գրանցվել է գրագողության 3 դեպք: Գրախոսման է ներկայացվել ընդհանուր առմամբ 59 հոդված: Ֆիզիկայի ամբիոնը երաշխավորել է 3 հոդված, մաթեմատիկայի ամբիոնը՝ 12, ինֆորմատիկայի ամբիոնը՝ 3, արվեստի ամբիոնը՝ 4, հայոց լեզվի ամբիոնը՝ 9, գրականության ամբիոնը՝ 4, քիմիայի ամբիոնը՝ 3, մանկավարժության ամբիոնը՝ 7, հեգեբանության ամբիոնը՝ 3, պատմության ամբիոնը՝ 7, քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնը՝ 2, տնտեսագիտության ամբիոնը՝ 2:

Վերջնական արդյունքում տպագրման է հանձնվել է 59 աշխատանք:

ՎՊՀ ՈՒԳԸ նախագահ՝

Լիլիթ Ղուլինյան